ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 1, 1953 Общественные науки

# ԱԼԵՔՍԵՅ ԿԱՐՊՈՎԻՉ ՋԻՎԵԼԵԳՈՎ

1952 թ. դեկտեմբերի 14-ին 77 տարեկան հասակում վախճանվեց Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, սովետական ակնավոր գիտնական, արվեստի պատմաբան և տաղանդավոր գրականագետ Ալեքսեյ Կարպովիչ Ջիվելեգովը։

Ա. Կ. Ջիվելեգովը ծնվել է 1875 թ. Նոր Նախիջևանում։ 1897 թ. ավարտել է Մոսկվայի համալսարանի պատմական ֆակուլտետը և 1907 թվականից մինչև կյանքի վերջին օրերը անընդմիջաբար եղել է Մոսկվայի մի քանի ԲՈՒՀ-երի դասախոս։

Նախքան ռևոլյուցիան Ջիվելեգովը արդեն հայտնի էր որպես իտալական վերածննդի դարաշրջանի պատմաբան, սակայն Հոկտեմբերյան ռևոլյուցիան էր, որ տաղանդավոր գիտնականին լիակատար հնարավորություն ընձեռեց բացահայտելու իր ունակությունները և շատ ավելի նպատակասլաց դարձնել նրա հետազոտական միտքը։

Ջիվելեգովի այնպիսի աշխատությունները, որպիսիք են «Իտալական վերածննդի սկիզբը», «Իտալական վերածննդի ակնարկները», նրա մենագրությունները Դանտեի, Միքել-Անջելոյի, Լեոնարդո դա Վինչիի մասին, նրա ընդարձակ առաջաբանները Մաքիավելլիի, Գվիչարդինիի, Վազարիի, Մազուչչոյի, Ֆիրենցուոլայի, Բրաչչոլինիի և իտալական վերածննդի մյուս գործիչների մասին, կենդանի և անմիջական կերպով վերարտադրում են հասարակական իրադրությունների պատկերը, կուլտուրայի և արվեստի գործիչների դեմքերի և նրանց ստեղծագործությունների հմայքը։

Ջիվելեգովի այդ աշխատությունները արժեքավոր ներդրում են իտալական վերածննդի դարաշրջանի ուսումնասիրության գործում։ Այդ աշխատություններում նա վեր է հանում իտալական վերածննդի գործիչների, գրողների և արվեստագետների հումանիստական գաղափարները և ռեալիստական արվեստը, գիտական մեծ ակտիվությամբ հակադրվելով վերածննդի դարաշրջանի անմահ հուշարձանների հումանիզմը և ռեալիզմը ժխտել փորձող ժամանակակից բուրժուական կեղծ պատմաբաններին։

1943—45 թվականներին ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի Մ. Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտը հրատարակեց «Անգլիական գրականության պատմության» երկու հատորը, որի խմբագրական կոլեգիայի անդամը և մի քանի կարևոր բաժինների հեղինակն էր Ա. Կ. Ջիվելեգովը։

Իտալական դրամատուրգ Գոլդոնիի կոմեդիաների վարպետ թարգմանությունները, կատարված Ջիվելեգովի կողմից, նույնպես վկայում են նրա գրական տաղանդի մասին։

Մեծ էրուդիցիայի և կուլտուրայի տեր, հայրենիքի բոլոր հաջողություններով ապրող և հուզվող, արտասովոր մանկավարժական ընդունակություններով օժտված Ջիվելեգովը հայրական հոգատարությամբ էր աճեցնում գիտու-

թյան երիտասարդ կադրերին։ Լինելով իտալական վերածննդի դարաշրջանի արվեստի և գրականության խորը մասնագետ, նա միևնույն ժամանակ հիանալի գիտեր սովետական գրականությունը, թատրոնը և արվեստը։ Ջիվելեգովը ռուսական առաջավոր կուլտուրայի, գրականության և արվեստի քաջատեղյակ էր և խանդավառ սիրահար և այդ հանգամանքը, իհարկե, մեծ չափով օգնում էր նրան բացահայտել իտալական հեռավոր 14, 15 և 16-րդ դարերի գրականության և արվեստի հուշարձանների հումանիստական գաղափարայնությունը և ձևերի ռեալիստական հստակությունը։

Չնայած Ա. Կ. Ջիվելեգովի տարիքին, նա երիտասարդական խանդավառություն էր հանդես բերում հասարակական գործունեության բոլոր ասպարեզներում մինչև իր կյանքի վերջին օրերը։

Սովետական կառավարությունը, բարձր գնահատելով Ջիվելեգովի ծառայությունները սովետական առաջավոր կուլտուրայի զարգացման գործում, նրան երկու անգամ պարգևատրել է Աշխատանքային Կարմիր Դրոշի շքանշանով և մի քանի անգամ մեդալներով։

1945 թվականին Ա. Կ. Ջիվելեգովը ընտրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ։